ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **13/05/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Վլադիմիր Առաքելյանը, Էդուարդ Բաբայանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նաիրա Մելիքյանը, Գևորգ Պողոսյանը (ներկայացվել է քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից), Պավել Ցուգունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արթուր Մովսիսյանը, Աննա Չոբանյանը, Արամ Զաքարյանը, Եղիշե Ավետիսյանը, Միքայել Պողոսյանը, Արմեն Նալբանդյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Դավիթ Զարոյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի երկրորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին.
2) Աբովյան համայնքի տարածքում գտնվող սահմանափակման ենթակա

ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին.
3) Աբովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին.
4) Աբովյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին.
5) Աբովյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին.
6) Աբովյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը սահմանելու մասին.
7) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0315-0231 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
8) Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 5-րդ նրբանցքի թիվ 10 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
9) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0302-0037 ծածկագրով հողամասի մի մասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 3.02 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
11) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 4.00324 հեկտար հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
12) Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին.
13) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
14) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 06-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին.
16) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 04-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
17) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Օրակարգի նախագիծը ներկայացնելու ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամներ Տիգրան Գեղամյանը և Գուրգեն Օսիպյանը լքեցին նիստերի դահլիճը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել՝

1) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100 մետր հեռավորության վրա՝ ժամը 22.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

2) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100-1000 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

3) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից 1000 մետր և ավելի հեռավորության վրա՝ ժամը 24.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը ներկայացնելու ընթացքում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Նորայր Միքայելյանը հայտարարեց, որ քաղաքական որոշում է կայացվել և խմբակցությունը նիստի մնացած քվեարկություններին չի մասնակցի:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը հայտնեց, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված փորձագիտական եզրակացությամբ առաջարկվել է նախագծում կատարել փոփոխություններ, առաջարկությունները ընդունվել են:

Հարց հնչեց, թե ի՞նչ երաշխիքներ կան, որ սահմանված ժամանակահատվածում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը կպահպանվի, իսկ խախտելու և խախտումները կրկնելու դեպքում ի՞նչ զսպող մեխանիզմներ են կիրառվում:

Պատասխանվեց, որ խախտումների դեպքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձինք օրենքով սահմանված կարգով կենթարկվեն վարչական պատասխանատվության, իսկ խախտումները հաճախակի կրկնելու դեպքում հնարավոր է նաև քննարկվի տրված թույլտվությունը կասեցնելու կամ թույլտվություն չտրամադրելու հարցը:
Հարցը դրվեց քվեարկության ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկված փոփոխություններով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ն/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) Աբովյան համայնքի տարածքում կարող են տեղակայվել բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից նվազագույնը 1000 մետր հեռավորության վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Աշխատակազմի քարտուղար Ա. Առաքելյանը հայտնեց, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված փորձագիտական եզրակացությամբ այս նախագծում ևս առաջարկվել է կատարել փոփոխություններ, առաջարկությունները ընդունվել են:
Հարցը դրվեց քվեարկության ՀՀ արդարադատության նախարարության կողմից առաջարկված փոփոխություններով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ն/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 82-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Հաստատել Աբովյան համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քննարկվեցին թեքահարթակների, կանգառների ծանրաբեռնվածության և վերելակների նորոգման վերաբերյալ հարցեր, ներկայացվեցին առաջարկներ խնդիրների կարգավորման վերաբերյալ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՉԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Սահմանել Աբովյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու մշտական հանձնաժողովի նախագահը ներկայացրեց եզրակացություն նախագծում փոփոխություններ կատարելու առաջարկներով: Հարցը դրվեց քվեարկության առաջարկված փոփոխություններով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՉԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Սահմանել Աբովյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու մշտական հանձնաժողովի նախագահը ներկայացրեց եզրակացություն նախագծում փոփոխություններ կատարելու առաջարկով: Հարցը դրվեց քվեարկության առաջարկված փոփոխություններով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Սահմանել Աբովյան համայնքի պաշտոնական համացանցային կայքի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քննարկվեց կայքի ծանրաբեռնվածության խնդիրը: Ներկայացվեցին խնդրի լուծման տարբերակներ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0315-0231 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 42-րդ կետերի և հիմք ընդունելով Մերի Վիրաբյանի հայտը (մուտք՝ 2022 թվականի ապրիլի 11-ի N Ք-1444), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող, Մերի Վիրաբյանին պատկանող (հիմք՝ 2022 թվականի մարտի 28-ի N 28032022-07-0110 վկայական) 07-054-0315-0231 կադաստրային ծածկագրով 0,10959 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության (վարելահող և այլ հողատեսք) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ մրգերի, բանջարեղենի մշակման և պահածոյացման արտադրամաս կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԿՈՏԱՅՔԻ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն

որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, հաշվի առնելով Արամ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ի N Ք-3177), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 25-ի N 1/փ-83 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արամ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2012 թվականի հունիսի 12-ի N 12022012-07-0163 վկայական, կադաստրային համար՝ 07-002-0093-0013) Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի 5-րդ նրբանցքի թիվ 10 հասցեում գտնվող 0.08 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0302-0037 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Նարինե Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի օգոստոսի 19-ի N 184) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 06-ի N 254 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Նարինե Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի սեպտեմբերի 10-ի N 10092020-07-0045 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-054-0302-0037) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 0.1038 հեկտար մակերեսով հողամասից 0.03 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության (հատակագիծը կցվում է):
2. Նարինե Մարգարյանը պարտավոր է եռամսյա ժամկետում Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 332 540 (մեկ

միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր քառասուն) դրամ՝ հողամասերի կադաստրային արժեքների նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.02 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 23-ի N 1/փ-63 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի NԼ-657 լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/657 թույլտվությունը, համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0156-0038 կադաստրային ծածկագրով 4.37231 հեկտար մակերեսով հողամասից՝ (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 13122021-07-0083 վկայական) 3.02 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքի օգտագործման գործառնական նշանակության հողի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «ԴԵՄԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդերքօգտագործման նպատակով տրամադրել սույն որոշման 1-ին կետում նշված 07-013-0156-0038 կադաստրային ծածկագրով 4.37231 հեկտար հողամասից 3.02

հեկտար հողամասը (համաձայն հատակագծի):
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 20 /քսան/ տարի՝ տարեկան 1 308 038 (մեկ միլիոն երեք հարյուր ութ հազար երեսունութ) դրամ վարձավճարով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Հարց հնչեց հողամասն առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ, հարցին տրվեց պարզաբանում:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 4.00324 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 29-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի մարտի 31-ի N 1/փ-67 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի NԼ-661 լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/661 թույլտվությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0161-0110 կադաստրային ծածկագրով 5.0035 հեկտար մակերեսով հողամասից՝ (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N 21122021-07-0020 վկայական) 4.00324 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքի օգտագործման գործառնական նշանակության հողի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

ընդերքօգտագործման նպատակով տրամադրել սույն որոշման 1-ին կետում նշված 07-013-0161-0110 կադաստրային ծածկագրով 5.0035 հեկտար հողամասից 4.00324 հեկտար հողամասը (համաձայն հատակագծի):
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 18 /տասնութ/ տարի՝ տարեկան 1 733 904 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր չորս) դրամ վարձավճարով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնի տնօրենի դիմումը (մուտք՝ 2022 թվականի ապրիլի 26-ի N Պ-555), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2003 թվականի օգոստոսի 5-ի N 1704772 վկայական) Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակի թիվ 1 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությանը վարձակալության իրավունքով տրամադրել 234.52 քառակուսի մետր մակերեսով տարածք (հատակագիծը կցվում է):
2. Պայմանագիրը կնքել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի ամսական չափը սահմանել 52 000 (հիսուներկու հազար) դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագիր կնքելու, դրանում փոփոխություն կատարելու և լուծելու մասին որոշումներն ընդունում է Աբովյան համայնքի ղեկավարը:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու

օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 05-Ա որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 06-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 06-Ա որոշմամբ հաստատված հավելված 16-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն

հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի, Քաղաքացիական օրենսգրքի 464-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանին
որոշում է.
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (հողամասերի, այլ անշարժ և շարժական գույքի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
1) Արթուր Մովսիսյան - Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի անդամ՝ աճուրդավար,
2) Արմեն Քոսակյան - ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,
3) Ռազմիկ Արզումանյան - ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,
4) Մերուժան Մելիքսեթյան - համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,
5) Արսեն Հարությունյան - համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,
6) Տաթևիկ Սարոյան - հանձնաժողովի անդամ՝ արձանագրող:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հարց հնչեց այլ խմբակցություններից անդամներ չներառելու մասին:
Պատասխանվեց, որ երկու խոշոր խմբակցություններին առաջարկ եղել է, սակայն պատասխան ստացվել է միայն «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունից, իսկ մյուս խոշոր խմբակցությունից առաջարկ չի եղել և նիստից յոթ օր առաջ որոշման նախագիծը հրապարակվել է:
«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից ստացվել է առաջակ ավագանու նիստից մեկ օր առաջ, որը հրապարակված նախագծում չի ներառվել:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգի 25-րդ և 30-րդ կետերը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Աբովյան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին» N 04-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Աշխատակազմի քարտուղար Արուսյակ Առաքելյանը հայտնեց, որ «Կրթության, մշակույթի և սոցիալական հարցերի մշտական» հանձնաժողովը չի ընտրել նախագահ և քարտուղար, հանձնաժողովի ոչ մի նիստ տեղի չի ունեցել: Հանձնաժողովում ճգնաժամը լուծելու համար «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը մի քանի անգամ առաջարկվել է վերանայել հանձնաժողովի կազմը, սակայն արձագանք չի եղել:
Նշվեց, որ ավագանու մշտական հանձնաժողովի նիստում առաջարկ է եղել, որ մինչև ավագանու նիստի օրը կկարգավորվի հարցը, բայց կարգավորման որևէ տարբերակ չի ներկայացվել:
Նախագիծը մշակվել է հաշվի առնելով «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավարի հանձնաժողովում ևս երկու անդամ ավելացնելու առաջարկը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի հունիսի 29-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Ավագանու անդամներ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԱՉՄԻԿ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՍԵԹՐԱԿ ՍԵԹՐԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավարի տեղակալ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ_____